


ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ Արմենիա ֆոնդային բորսայում իրականացված առևտրային գործունեության համառոտ տեսություն




2009 թվականի II եռամսյակ

2009 թվականի ապրիլ-հունիս ամիսներին ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ Արմենիա ֆոնդային բորսայում իրականացվել է բաժնետոմսերի, կորպորատիվ և պետական պարտատոմսերի, ՌԵՊՈ գործիքների, ինչպես նաև արտարժույթի առևտուր: Ընդհանուր առմամբ եռամսյակի ընթացքում նկատվել է բորսայական առևտրի ծավալների անկում, ինչը պայմանավորված է բաժնետոմսերով, կորպորատիվ պարտատոմսերով և արտարժույթով առևտրի ծավալների որոշակի նվազմամբ: Ինչ վերաբերում է պետական պարտատոմսերի և ՌԵՊՈ գործիքների առևտրի ծավալներին, ապա դրանք նախորդ եռամսյակի համեմատ աճել են՝ համապատասխանաբար, 129.2%-ով և 57.43%-ով: Բորսայական առևտրի ծավալների մեծ մասն ավանդաբար բաժին է ընկել արտարժույթով առևտրին (տես Նկար 1):



Բաժնետոմսերի բորսայական առևտուր

2009թ.-ի երկրորդ եռամսյակի ընթացքում բորսայում բաժնետոմսերով կնքվել է չորս գործարք՝ 925,900 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Գործարքների առարկա են հանդիսացել «ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ Արմենիայում» առևտրին թույլատրված՝ «Ալմաստ» ԲԲԸ (ALMS) և «Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ (ESHG) ընդհանուր թվով 1,943 հասարակ անվանական բաժնետոմս:




30.06.2009-ի դրությամբ «ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ Արմենիայում» ցուցակված և առևտրին թույլատրված է եղել ութ թողարկողի 9 բաժնետոմս, իսկ բորսայական շուկայի ընդհանուր

կապիտալիզացիան¹ կազմել է 53,205,267,450 ՀՀ դրամ, ինչը մոտ 0.19%-ով պակաս է 31.03.2009-ին գրանցված շուկայի կապիտալիզացիայից՝ պայմանավորված «Ալմաստ» ԲԲԸ բաժնետոմսերի շուկայական գնի նվազմամբ:

Կորպորատիվ պարտատոմսերի բորսայական առևտուր

2009-ի երկրորդ եռամսյակի ընթացքում «ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷՔՍ Արմենիայում» կորպորատիվ պարտատոմսերով կնքվել է 170 գործարք՝ 2,830,490,422 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Գործարքների առարկա է հանդիսացել 11 թողարկողի 539,748 պարտատոմս:

Նախորդ եռամսյակի համեմատ կորպորատիվ պարտատոմսերով կնքված գործարքների քանակը, գործարքների առարկա կորպորատիվ պարտատոմսերի քանակը և գործարքների ծավալը կրճատվել են, համապատասխանաբար, 37.27%-ով, 4.83%-ով և 23.14%-ով (տես Նկար 3), ինչը պայմանավորված է եղել, մասնավորապես, 2009-ի առաջին եռամսյակի ընթացքում «Արմենիան Քափրր Փրոգրամ» ՓԲԸ (ARCPB1) և «Վալլետտա» ՍՊԸ (VALTB1) պարտատոմսերի մարմամբ: Միաժամանակ 2009-ի հաշվետու եռամսյակի ընթացքում կորպորատիվ պարտատոմսերով կնքված գործարքների ծավալը և քանակը, հապատասխանաբար, 312.90%-ով և 123.68%-ով գերազանցում են 2008-ի նույն ժամանակահատվածի ցուցանիշները:



30.06.2009-ի դրությամբ «ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷՔՍ Արմենիայում» ցուցակված և բորսայական առևտրին թույլատրված է եղել 11 թողարկողի 13 պարտատոմս:


ՌԵՊՈ գործիքների բորսայական առևտուր

Հաշվետու եռամսյակի ընթացքում բորսայում կնքված ՌԵՊՈ գործարքների ծավալը կազմել է 1,356,995,631 ՀՀ դրամ՝ 57.43%-ով գերազանցելով նախորդ եռամսյակի ցուցանիշը: ՌԵՊՈ գործարքների առարկա են հանդիսացել «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ (SHNCB4), «Էլիտ Գրուպ» ՓԲԸ (ELTGB2) և «Վալլետտա» ՍՊԸ (VALTB3) պարտատոմսերը: Եռամսյակի ընթացքում մարված ՌԵՊՈ պայմանագրերի ընդհանուր գումարը կազմել է 1,136,747,947 ՀՀ դրամ:

Պետական պարտատոմսերի բորսայական առևտուր

¹ Շուկայի կապիտալիզացիան հաշվարկված է «ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷՔՍ Արմենիայում» 30.06.2009-ի դրությամբ ցուցակված և առևտրին թույլատրված հասարակ անվանական այն բաժնետոմսերի համար, որոնցով «ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷՔՍ Արմենիայում» երբևէ կնքվել են գործարքներ:

2009-ի երկրորդ եռամսյակին պետական պարտատոմսերով բորսայական առևտրի ծավալը (զման զնով) կազմել է 409,754,965 ՀՀ դրամ, ինչը 129.20%-ով գերազանցում է նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը: Գործարքների քանակը նույնպես աճել է 88.89%-ով՝ կազմելով 34 գործարք: Պետական պարտատոմսերով գործարքների մանրամասները բերված են Աղյուսակ 1-ում:



Արտարժույթի բորսայական առևտուր


2009-ի երկրորդ եռամսյակի ընթացքում «ՆԱՍԴԱՔ ՕԷՍԷՔՍ Արմենիայում» արտարժույթով կնքվել է 726 գործարք՝ բոլորն ԱՄՆ դոլարով: Կնքված գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 45,864,895,062 ՀՀ դրամ (USD 124,737,000): Նախորդ եռամսյակի

Աղյուսակ 1. 2009-ի ապրիլ-հունիս ամիսներին պետական պարտատոմսերով կնքված գործարքներ

Ծածկագիր	Թողարկման ծավալ	Կնքված գործարքներ				Վերջին գործարք	
		Միջ. կշռվ. գին	Գործ. քանակ	Գործ. ծավալ (անվանական արժեքով)	Գործ. ծավալ (զման զնով)	Գին	Կնքման ամսաթիվ
AMGB20072283	83,600,900	15.6642%	3	30,000,000	23,202,910	15.9000%	15.06.2009
AMGN36052110	115,574,140	11.0068%	2	31,000,000	30,260,500	10.7293%	23.06.2009
AMGN36265126	63,750,000	14.3840%	1	10,000,000	9,566,500	14.3840%	25.06.2009
AMGN60052135	55,800,600	9.1137%	27	329,100,000	342,170,370	9.0000%	19.06.2009
AMGT52226105	10,000,000	9.7500%	1	5,000,000	4,554,685	9.7500%	26.06.2009
Ընդամենը՝			34	405,100,000	409,754,965		

համեմատ ԱՄՆ դոլարով կնքված գործարքների ծավալը նվազել է 76.15%-ով, իսկ գործարքների քանակը՝ 67.43%-ով: Գործարքների թվի դինամիկան ներկայացված է Նկար 5.1-ում և 5.2-ում:

Նկար 5.1. 2008-2009թթ.-ին ԱՄՆ դոլարով կնքված գործարքներ (եռամսյակային կտրվածքով)



Նկար 5.2. 2008-2009թթ.-ին Եվրոյով կնքված գործարքներ (եռամսյակային կտրվածքով)

